

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, (այսուհետև՝ վարչություն) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների ու կարգադրությունների պահանջներով, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2015 և 2016 թվականների աշխատանքային ծրագրին համապատասխան 2015-2016 ուսումնական տարում կազմակերպելով մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ իր աշխատանքները նպատակաուղղել է ապահովելու մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, կրթության որակի բարձրացումը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը և համակարգի արդյունավետ գործունեությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել է մարզային ենթակայության 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական, 1 հատուկ դպրոց, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության՝ 1 կրթահամալիր, 6 ավագ դպրոց և 1 հիմնադրամ/Ծաղկունքի բաց դպրոցը/:

Մարզային ենթակայության դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1461 դասարան՝ 27212 աշակերտով, Գավառի N 1 հատուկ դպրոցում՝ 7.5 դասարան՝ 38 աշակերտով, Սևանի N3 հիմնական դպրոցում՝ ռուսերեն ուսուցմամբ 4 դասարան՝ 35 աշակերտով, ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիրում, 6 ավագ դպրոցում և Ծաղկունքի բաց դպրոցում սովորել է 1882 աշակերտ:

2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ավարտին մարզում գործում է 125 հանրակրթական դպրոց՝ 28778 աշակերտով / Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի տվյալները ներկայացվում են առանձին/այդ թվում՝

1. մարզային ենթակայության 117 դպրոց՝ 26907 աշակերտով
2. ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիր, 1 հիմնադրամ / <<Ծաղկունքի բաց դպրոց >>/ և 6 ավագ դպրոց՝ 1871 աշակերտով

Ուսումնական տարվա ընթացքում մարզի դպրոցներ է ընդունվել 226 աշակերտ(որից 118-ը՝ այլ հանրապետություններից), իսկ տեղափոխվել կամ դպրոցը թողել են 533 աշակերտ (որից 356-ը՝ այլ հանրապետություններ):

Մարզի համայնքների ղեկավարների և իրավասու կազմակերպությունների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններ և, ըստ դպրոցների տնօրենների ու համայնքների

ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության, մարզում չեն եղել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելուն, որի արդյունքում շուրջ 180 երեխա ապահովվել է հագուստով և գրենական պիտույքներով:

2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի վերջում աշակերտների թիվը 26907-ն է, /կամ աշակերտների թիվը պակասել է 149- ով/,որից գնահատվել են 23951-ը:

2937 առաջին դասարանցի, գործող կարգի համաձայն, չի գնահատվել, իսկ համապատասխան դպրոցների մանկավարժական խորհուրդների որոշմամբ և ծնողների համաձայնությամբ առաջին դասարանի 12 աշակերտ մնացել է դասընթացը կրկնելու:

Չեն գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 19 աշակերտ, որոնք նույնպես մնացել են դասընթացը կրկնելու (0,07%):

Ամփոփելով դպրոցներից ստացված համապատասխան տվյալները՝ պարզվել է, որ գերազանցիկներ են՝ 5617-ը (23.44%), հարվածայիններ են՝ 6532-ը (27.27%), միջակ առաջադիմություն ունեն՝ 11764-ը (49.12%), իսկ 38-ը՝ (0.15%) ունեն անբավարար գնահատական,որից 8-ը՝ 3 և ավելի առարկաններից, որոնք նույնպես մնացել են դասընթացը կրկնելու:

Այսպիսով, անկախ քննությունների արդյունքներից, 1-12-րդ դասարաններում դասընթացը կրկնելու է մնացել 39 աշակերտ(0.14%), իսկ 2-12-րդ դասարաններում ամառային առաջադրանք է ստացել 30-ը(0.11%):

- 2015-2016 ուստարվա ավարտին 12-րդ դասարանում սովորել է 1699 աշակերտ, որից գնահատվել է 1696-ը, չի գնահատվել 3 աշակերտ՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Պետական ավարտական քննությունների/ այդ թվում՝ ա/թ հուլիսի 2-8-ը անցկացված վերաքննությունների/ արդյունքում՝ 12-րդ դասարանն ավարտել և միջնակարգ կրթության ատեստատ է ստացել 1688 աշակերտ, որից մեկը՝ դրսեկ:

- 9-րդ դասարանում 2015-2016 ուստարվա ավարտին սովորել է 2156 աշակերտ, սակայն գնահատվել է 2151-ը, չի գնահատվել 5 աշակերտ՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Ավարտական քննությունների/ այդ թվում՝ ա/թ հուլիսի 2-8-ը անցկացված

վերաքննությունների/ արդյունքում դրական է ստացել 2135 աշակերտ: Մեկ աշակերտ չի մասնակցել 6 առարկայից քննություններին, իսկ մեկ աշակերտ՝ 2 առարկայից:

Գերազանց առաջադիմությամբ ավարտած 9-րդ դասարանի 130 աշակերտի տրվել է գերազանցության նմուշի վկայական, իսկ 2005-ին՝ սովորական նմուշի վկայական:

4-րդ դասարանում ուսումնական տարվա ավարտին սովորել է 2542 աշակերտ, որից փոխադրական քննություններին մասնակցելու թույլատրվել է 2540-ը, սակայն մասնակցել է 2530 աշակերտ և ստացել դրական գնահատականներ:

Մարզի դպրոցների 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի աշակերտների շարժը և առաջադիմությունը, ըստ տարածքների, հետևյալն է՝

N	Տարածքի անվանումը	Աշփիվը 2-րդ կիս. սկզբում	Դպրոց են ընդունվել կիսամյակի ընթացքում		Դպրոցը թողել են կիսամյակի ընթացքում		Աշփիվը կիս. վերջում	Գնահատվել են	Չեն գնահատվել	Գերազանցիկ	Հարվածային	Միջակ	Անբավարար գնահատական ունեն /աշ./		Առաջադիմություն %	Որակ %
			Ընդամենը	Այդ թվում արտերկրից	Ընդամենը	Այդ թվում արտերկրի							Ընդամենը	Այդ թվում 3 և ավելի աստիճանից		
1	Գավառ	5847	38	18	37	25	5846	5208	638	1492	1333	2371	12	4	99.8	54.2
2	Մարտունի	10608	21	16	123	85	10511	9356	1155	2070	2406	4865	15	2	99.8	47.8
3	Սևան	4237	15	6	47	32	4206	3722	484	1021	1228	1472	1	0	99.9	60.4
4	Վարդենիս	4688	18	10	38	19	4665	4167	498	839	1162	2162	4	2	99.9	48.0
5	Ճամբարակ	1676	13	1	7	1	1679	1498	181	195	403	894	6	0	99.6	39.9
Ընդամենը մարզում		27056	105	51	252	162	26907	23951	2956	5617	6532	11764	38	8	99.8	50.7

Դպրոցներից ստացված տվյալների վերլուծությունից պարզվում է, որ մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 99.8 %, որակը՝ 50.7%:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր առաջադիմություն ունի Ճամբարակի (96.6%) տարածաշրջանի դպրոցները, իսկ որակ՝ Ճամբարակի (39,9%), Վարդենիսի (48%) և Մարտունու (47.8%) տարածաշրջանների դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր են Գավառի N 2 միջնակարգ (99%), Լճափի միջնակարգ (99.1%), Տրետուքի միջնակարգ (97.4%), Ակունքի միջնակարգ (99%), Ծովասարի միջնակարգ (97.4%), Վաղաշենի միջնակարգ (91.4%), Շորժայի միջնակարգ (97.4%), Ճամբարակի N 1 հիմնական (93.3%), Վահանի միջնակարգ (93.3%), Դոմաշենի միջնակարգ (98.8%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին որակից ցածր են Գավառի N8 միջնակարգ (34.9%), Սարուխանի N 2 միջնակարգ (41%), Կախակնի միջնակարգ (26.4%), Ախպրաձորի միջնակարգ (32.7%), Աստղաձորի միջնակարգ (35.5%), Վարդենիկի N 2 հիմնական (36.7%), Արտանիշի միջնակարգ (22%), Մարտունի գյուղի միջնակարգ (28%), Գագարինի միջնակարգ (32.9%), Դոմաշենի միջնակարգ (41%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին առաջադիմությունից և միջին որակից բարձր են Ծաղկաշենի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 82%), Սարուխանի N 1 միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 67%), Գեղամաբակի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 62.5%), Ծափաթաղի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 62.5%), Ծովինարի տարրական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 78%), Լեոնահովիտի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 58.8%), Գետիկի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 44%), Կալավանի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 88%), Սևանի N 3 հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 75%), Սևանի N 1 հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 71%) և մի շարք այլ դպրոցներ:

• 2-րդ կիսամյակի սկզբում Գավառի N 1 հատուկ դպրոցի թվով 7 դասարանում սովորել է 40 աշակերտ, կիսամյակի վերջում՝ 43: Դպրոցի աշակերտների առաջադիմությունը կազմում է 100%, իսկ որակը՝ 13.4%:

Թվով 6 դպրոցում իրականացվել է ներառական կրթություն, այդ թվում 21-ը սովորել է Գավառի N 1 հիմնական դպրոցում, 19-ը՝ Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում, 4-ը՝ Վարդենիսի N 2 հիմնական դպրոցում, 24-ը՝ Կարմիրգյուղ գյուղի N 2 միջնակարգ դպրոցում, 46-ը՝ Մարտունու N 2 հիմնական դպրոցում, 5-ը՝ Սևանի N 3 հիմնական դպրոցում, ընդամենը՝ 119 աշակերտ:

Հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ ներկայացված և «Մայրբի» համակարգով մեր տնօրինությանն ուղարկված գրությունների հիման վրա մեր կողմից կազմվեց տեղեկանք՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների քննությունների անցկացման ժամանակացույցի վերաբերյալ», ըստ որի, 120-200 ժամ բացակայություն ունեւ ընդամենը 8 աշակերտ՝ 4 դպրոցից/Գավառի N1 հ/դ՝ 1 աշակերտ, Ն. Գետաշենի N2 մ/դ՝ 3 աշակերտ Վ. Գետաշենի N2 մ/դ՝ 1 աշակերտ, Մաղինայի մ/դ՝ 3 աշակերտ/:

2015-2016 ուստարում մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում աշխատել է 3356 մանկավարժ, որոնցից 251-ը՝ տնօրեն և փոխտնօրեն, նախակրթարաններում աշխատողների թիվը 52 է: Աշակերտ-ուսուցչական դրույք հարաբերակցությունը 11, դասարանների միջին խտությունը՝ 18,65 է, ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 149000 դրամ: Բոլոր մանկավարժների աշխատավարձը հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված կարգով և վճարվել ժամանակին:

Անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումներին աջակցելու հարցում: Կազմվել և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին է տրամադրվել վերապատրաստվող ուսուցիչների անվանացանկը, վերապատրաստումների ժամանակացույցի մասին իրազեկվել է բոլոր հանրակրթական դպրոցներին: Հանրակրթական տարբեր առարկաներից 2015 թվականին ատեստավորվել է 852 ուսուցիչ (1-ին փուլում ատեստավորվել է 3172 ուսուցիչ): 2016 թվականին ատեստավորման նպատակով ներկայացվել է 625 ուսուցչի տվյալ:

Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Ուստարվա ընթացքում առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցույթային կարգով և 39 դպրոցում անցկացված մրցույթների (այդ թվում՝ կրկնակի և բազմակի մրցույթները) արդյունքում նշանակվել է 51 ուսուցիչ: «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ համագործակցելով՝ նոր ուսումնական տարում, մարզ կգործուղվի ևս 3 ուսուցիչ, որոնք կդասավանդեն Վահանի/մաթեմատիկա/, Մարտունու/անգլերեն/ և Գեղամասարի/կենսաբանություն/ միջնակարգ դպրոցներում:

Մարզի նախկին վարչական 5 շրջանների մեկական դպրոցներում (Գավառի N4 հ/դ, Սևանի N3 հ/դ, Մարտունու N2 հ/դ, Վարդենիսի N4 հ/դ և Ճամբարակի N4 հ/դ) 2015-2016 ուսումնական տարվանից ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան:

Տարվա ընթացքում կազմակերպվել են «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ», «Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ», «Նախնական զինվորական պատրաստություն առարկայի լավագույն ուսուցիչ»

մրցույթները և ապահովվել հաղթողների տվյալների ներկայացումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Մարզում 2015-2016 ուսումնական տարվա լավագույն ուսուցիչ է ճանաչվել Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Արարատ Մովսեսյանը, լավագույն տնօրեն՝ Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոցի տնօրեն Լուսինե Հովհաննիսյանը, լավագույն դաստիարակ՝ Սևանի N2 «Զարթոնք» մանկապարտեզի դաստիարակչուհի Նարինե Հարությունյանը: ՆԶՊ առարկայի տարվա լավագույն զինվորական ղեկավար են ճանաչվել Վրեժ Մագուլյանը (Զուլաքար գյուղի N1 միջնակարգ դպրոց) և Տիգրան Բաղիշջանյանը (Մարտունու ավագ դպրոց):

Չնայած պարբերաբար արված զգուշացումներին՝ բազմաթիվ դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրեններ հետևողական չեն. «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների պահանջները կատարելիս՝ բազմաթիվ հաստատություններում լիարժեք չի կազմակերպվում մրցույթների 1-ին փուլը և 2-րդ փուլի մասնակցության թեկնածուները սակավաթիվ են լինում: Պասիվ է նաև որակավորման 1-ին աստիճանի տարակարգ ստանալու համար դիմողների թիվը, եթե 2015 թվականին նրանց թիվը 12 –ն էր, ապա 2016 թվականին՝ 21-ը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մարտի 18-ի N 113-ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումներով, առաջադրող մարմինների առաջարկությունների համաձայն, 117 դպրոցում / բացառությամբ՝ Դրախտիկի միջնակարգ դպրոցի / կատարվել են խորհուրդների անդամների փոփոխություններ:

Մարզի դպրոցներ կատարած ստուգայցերի ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել հաստատությունների տնօրենների կողմից իրավական ակտերի պահանջների կատարմանը և ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությանը: Թերություններն ու խախտումները տարբեր են: Թերությունները կամ բացթողումները, որոնք հնարավոր է ուղղել, մեր ցուցումների համաձայն, տեղում շտկվում են, իսկ իրավական հետևանք առաջացնող խախտումների դեպքում համապատասխան առաջարկություններ են ներկայացվում մարզպետին: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ /18.02.2016թ. N142-Ս/՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի» 15-րդ կետի և 16-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները չպահպանելու պատճառով, անվավեր է ճանաչվել Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան 2 միջնակարգ դպրոցի տնօրենի՝ 2016 թվականի հունվարի 22-ի N6 հրամանը, իսկ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար կարգապահական տույժ են ստացել Կարմիրգյուղ գյուղի N1 միջնակարգ դպրոցի տնօրեն Կարինե Շահբազյանը, Ներքին Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոցի տնօրեն Գագիկ Եղիազարյանը և Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի տնօրեն Վարդ Ավետիսյանը: Չնայած մեր կողմից կատարած բազմաթիվ զգուշացումներին և ցուցաբերած մեթոդական օգնությանը՝ բազմաթիվ խախտումներ ու թերություններ արձանագրվել են հատկապես մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից դպրոցներում ներքին աուդիտի

աշխատանքներ իրականացնելու ժամանակ: 2015-2016 ուսումնական տարում ներքին աուդիտի աշխատանքներ են իրականացվել 13 դպրոցում, որոնցից 9-ի /Գեղարքունիքի, Գավառի N 7, Հայրավանքի, Շատջրեքի, Գեղամասարի, Զովաբերի, Մեծ Մասրիկի միջնակարգ և Գեղամաբակի ու Վարդենիկի N2 հիմնական/ արդյունքները քննարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստերում և ներքին աուդիտի կոմիտեի առաջարկությամբ 4 տնօրենի՝ Սևադա Գափոյանի (Վարդենիկի N2 հ/դ), Զոհրակ Հովհաննիսյանի (Զովաբերի մ/դ), Աշոտ Բարսեղյանի (Գեղամասարի մ/դ) և Ատոմ Հակոբյանի (Մեծ Մասրիկի մ/դ) նկատմամբ կիրառվել է «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Մնացած 4 դպրոցների/Գեղամավանի, Ակունքի, Սոթքի միջնակարգ և Սևանի N4 հիմնական/ ներքին աուդիտի արդյունքները կքննարկվեն առաջիկայում:

Նկատի ունենալով, որ մինչև տարեվերջ 68 դպրոցում աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու պատճառով կազմակերպվելու են տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթներ, ուստի նոր ուսումնական տարում շարունակվելու են համապատասխան ուսումնասիրությունները թե՛ կրթության բովանդակային, և թե՛ ֆինանսական առումով:

Կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներն ու նորարարական մեթոդները՝ կրթության որակի բարձրացման, ծնող-դպրոց համագործակցության և կապի ամրապնդման նպատակով մարզի դպրոցներում ներդրված «*Dasaran.am*» կրթական ծրագրի աջակցությամբ հետևել ենք երեխայի՝ դպրոց հաճախելիության և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությանը: <<

Dasaran.am>> կրթական ծրագրի տնօրենի կողմից պարբերաբար մեզ է տրամադրվում տեղեկատվություն՝ դասամատյանների էլեկտրոնային մուտքագրման աշխատանքների վերաբերյալ: Վերջին՝ 21.06.2016 թվականին տրամադրված տեղեկատվության համաձայն, մուտքագրումները լիարժեք կատարած/100%/ դպրոցների ցանկում է 89 դպրոց, ոչ լիարժեք կատարողների/51-99%/ ցանկում՝ 25 դպրոց/Ակունքի, Գեղարքունիքի, Ծաղկունքի, Կուտականի, Մարուխանի N3, Լանջաղբյուրի, Ծովակի, Ախպրաձորի, Գեղհովիտի N1, Ն. Գետաշենի N1, Երանոսի N1, Մաքենիսի, Դոմաշենի, Շատվանի, Մարտունու, Գավառի N2, Վ. Գետաշենի N2, Լիճքի, Ծաղկաշենի, Կախակնի, Տրետուքի, Արտանիշի, Դպրաբակի, Փամբակ-Դարանակի և Սևանի N5 միջնակարգ դպրոցներ/, թերի աշխատանքներ կատարողի/0-50%՝ 1 դպրոց (Ծովասարի միջնակարգ դպրոց):

Համապատասխան աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 63 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով), 6-ը՝ էլեկտրաէներգիա, 48-ը՝ հեղուկ վառելանյութ:

Աշխատանքներ են իրականացվել դպրոցները համակարգչային տեխնիկայով և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինելու ուղղությամբ, որի արդյունքում 125 դպրոց ունի 1940 համակարգիչներ և համակարգչային սարքավորումներ, բոլոր դպրոցները միացած են ինտերնետ ցանցին: Համակարգիչներով դպրոցների ապահովվածությունը կազմում է 13.85 աշակերտին 1 համակարգիչ (նախորդ տարի՝ 19 աշակերտին՝ 1 համակարգիչ հարաբերակցությունն էր):

Աջակցություն է ցուցաբերվել կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին՝ ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքման աշխատանքներում:

Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար նոր ուստարվա նախաշեմին հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցական շենքերի պահպանմանը և տարածքների բարեկարգմանը: ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2015 թվականին վերանորոգվել են Հայրավանքի միջնակարգ (44 մլն դրամ), Սևանի N1 հիմնական (56 մլն դրամ) և Լճափի միջնակարգ (10 մլն դրամ) դպրոցները:

Մարզի 21 հանրակրթական դպրոցներում իրենց կողմից խնայված ֆինանսական միջոցների հաշվին 2015 թվականի նախահաշվի շրջանակներում իրականացվել են ավելի քան 163 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ. Գավառի N1 հ/դ՝ 14 մլն. դրամ, Գավառի N7 մ/դ՝ 3,5 մլն. դրամ, Լանջաղբյուրի մ/դ՝ 5,5 մլն. դրամ, Կարմիրգյուղի N2 մ/դ՝ 1,8 մլն. դրամ, Ծովագարդի մ/դ՝ 2 մլն. դրամ, Մարտունու N2 հ/դ՝ 9,1 մլն. դրամ, Երանոսի N1 մ/դ՝ 6,67 մլն. դրամ, Ձորագյուղի հ/դ՝ 10,9 մլն. դրամ, Ն. Գետաշենի N1 մ/դ՝ 23 մլն. դրամ, Ն. Գետաշենի N2 մ/դ՝ 3,09 մլն. դրամ, Գեղիովիտի N1 մ/դ՝ 3,4 մլն. դրամ, Գեղիովիտ N2 մ/դ՝ 3 մլն. դրամ, Սևանի N3 հ/դ՝ 10,362 մլն. դրամ, Սևանի N4 հ/դ՝ 4,72 մլն. դրամ, Լճաշենի մ/դ՝ 5,4 մլն. դրամ, Ծովագյուղի մ/դ՝ 9 մլն. դրամ, Վարդենիսի N2 հ/դ՝ 9,74 մլն. դրամ, Վարդենիսի N3 հ/դ՝ 8,99 մլն. դրամ, Կարճաղբյուրի մ/դ՝ 14 մլն. դրամ, Ծովակի մ/դ՝ 14 մլն. դրամ, Լուսակունքի մ/դ՝ 1,5 մլն. դրամ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով սկսվել են վերանորոգման աշխատանքները Զուլաքարի N2 միջնակարգ (100 մլն դրամ) և Սևանի N1 հիմնական (58 մլն դրամ) դպրոցներում:

Մարզի 14 հանրակրթական դպրոցներում իրենց կողմից խնայված ֆինանսական միջոցների հաշվին 2016 թվականի նախահաշվի շրջանակներում նախատեսվում են իրականացնել ավելի քան 200 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ:

Հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում կարևորելով ոչ պետական միջոցների ներգրավումը՝ ապահովվել է մարզպետարանի աշխատակազմի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենների համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, բարեգործական կազմակերպությունների հետ, որի արդյունքում իրականացվել է շուրջ 62 միլիոն դրամի արտաբյուջետային միջոցների ներգրավում հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման ու գույքավորման աշխատանքներում, այդ թվում՝

Լճաշենի մ/դ «Փարոս» հիմնադրամ/ 16 դասասենյակի վերանորոգում, Գագարինի մ/դ՝ «Հայ դպրոց» /աշակերտական սեղան-նստարանների տրամադրում/, Ծովագյուղի մ/դ՝ Ծովագյուղի համայնքապետարան՝ 1.5 մլն.դրամ/դահլիճի վերանորոգում, գույքի ձեռքբերում/, Գավառի N1 հատուկ դպրոց՝ «ՀՕՖ»/ տանիքի, դռների ու պատուհանների վերանորոգում/, Ներքին Գետաշենի N2 մ/դ՝ «Փրկենք երեխաներին» 18 մլն. դրամ/մարզադահլիճի վերանորոգում/, Վարդենիսի N1 հ/դ՝ «Փրկենք երեխաներին», 12 մլն. դրամ/մարզադահլիճի վերանորոգում/, Մաղինայի մ/դ՝ «Հայ դպրոց»/150 հատ սեղան-նստարանների տրամադրում/, Փամբակ-Դարանակի մ/դ՝ News/am գործակալություն՝ 3.45 մլն. դրամ/48 աշակերտի պլանշետի տրամադրում, իսկ դպրոցին՝ համակարգիչ և գրականություն/, <<Վիվասել>>՝ 250000 դրամ/ հանդիսությունների դահլիճի

վերանորոգում/, Ճամբարակի N1 հ/դ՝ «Վորլդ Վիժն»՝ 50000 դրամ/սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին գրենական պիտույքներ/, ԳԴՀ «Գյոթե ինստիտուտ»՝ 300000 դրամ/ գերմաներենի կաբինետի գույքի համալրում/, Վահանի մ/դ՝ «Վիվասել»՝ 411900 դրամ/ 10 համակարգիչ/, Շորժայի մ/դ՝ Շորժայի համայնքապետարան՝ 1.1 մլն. դրամ/ 2 դասասենյակի դռների և պատուհանների տեղադրում/, Դպրաբակի մ/դ՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիա՝ 800000 դրամ/ շախմատի զարգացում/:

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» կազմակերպության աջակցությամբ մարզային ենթակայության 9 / Գավառի N 2, N 8, Լուսակունքի, Մեծ Մասրիկի, Գեղհովիտի N 1, Կարմիրգյուղ գյուղի N 2, Ծովագյուղի, Դոմաշենի և Մարտունու միջնակարգ/ և ՀՀ ԿԳՆ ենթակայության 3 դպրոցներում /Մարտունու և Սևանի ավագ ու Վարդենիկի կրթահամալիր/ ստեղծվել ու կահավորվել են ինժեներական խմբակ-լաբորատորիաներ:

Աշխատանք է տարվել մարզի դպրոցները 2015-2016 ուսումնական տարվա համար նախատեսված դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ապահովելու ուղղությամբ: ՀՀ ԿԳՆ և համապատասխան հրատարակչությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ մարզկենտրոն է ներկրվել և, ըստ ներկայացրած հայտերի, դպրոցներին են բաշխվել 2015-2016 ուստարվա 1-12-րդ դասարանների դասագրքեր, ուսուցիչների ձեռնարկներ, ուսումնասօժանդակ գրականություն (տեղեկագրեր, պաստառներ, քարտեզներ, մանկավարժական պարբերականներ): 2015-2016 ուսումնական տարում դպրոցներում առկա 286433 կտոր դասագրքերից 15874 հատ տրվել է որպես ուսուցիչների օրինակ, 188556 հատ դասագիրք բաշխվել է աշակերտներին և գրադարանային ֆոնդում է մնացել 81801 կտորը: Անցած ուսումնական տարում դասագրքերի ներդրումային գումարները կազմել են 77332040 դրամ, որից ՀՀ պետական բյուջեի կողմից սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերի դիմաց տրվել է 9165100 դրամի դասագիրք: Գանձումների և մուծումների աշխատանքները կատարվել են 100%:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված տարաբնույթ միջոցառումները նպատակաուղղվել են ոչ միայն սովորողների կրթության որակի ապահովմանը, այլև դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Այսպես՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն՝ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը:

Օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած 2741 աշակերտից 432-ը հանդես է եկել մարզային փուլում, իսկ հանրապետական փուլին մասնակցած 72 աշակերտից 5-ը ստացել է դիպլոմ, 8-ը՝ գովասանագիր, իսկ «ՆԶՊ» առարկայից՝ 1 առաջին կարգի, 2 երկրորդ և 1 երրորդ տեղերի մրցանակներ, մարզի թիմը հանրապետությունում գրավեց երկրորդ տեղը:

1-ին կարգի դիպլոմ է շահել Ներքին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Անուշ Գրիգորյանը «Գերմաներեն» առարկայից:

2-րդ կարգի դիպլոմ են շահել՝
Վարդենիսի N3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Անի Համբարձումյանը՝
<<Քիմիա>> առարկայից
Նորատուսի N1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ալլա Ասոյանը՝ հայ <<Հայ
գրականություն>> առարկայից
3-րդ կարգի դիպլոմ են շահել՝
Մարտունու ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արսեն Հայրապետյանը՝
<<Աշխարհագրություն >> առարկայից
Նորատուսի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Նունե Պողոսյանը՝ ՀԵՊ
Գովասանագրեր են ստացել՝
Վարդենիսի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Վաղթանգ Պողոսյանը՝
<<Կենսաբանություն >> առարկայից
Լճաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Կալիպան Սարիբեկյանը՝
<<Աշխարհագրություն >> առարկայից
Մարտունու N2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Սոնա Միրզիկյանը՝ <<Ռուսաց
լեզու >> առարկայից
Լիճքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արսեն Պողոսյանը՝ <<Գերմաներեն>>
առարկայից
Լճավանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Մարտիրոսյանը՝
<<Պատմություն >> առարկայից
Ծովինարի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Հրայր Մելքոնյանը՝ <<Պատմություն >>
առարկայից
Նորատուսի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Նունե Պողոսյանը՝ <<Հայ
գրականություն>> առարկայից
Վարդենիսի N2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Աիդա Բադալյանը՝ <<Հայոց
լեզու >> առարկայից
Վերլուծելով 2015-2016 ուստարվա առարկայական օլիմպիադայի արդյունքները՝ կարել է այն
համարել դրական:

Օլիմպիադաների հանրապետական փուլում լավ են հանդես եկել Ճամբարակի և Սևանի ավագ,
Գեղիովիտի N2 և Ն. Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցների աշակերտները:
Կազմակերպվել են դպրոցականների շախմատի 10-րդ օլիմպիադայի ներդպրոցական,
տարածքային և մարզային փուլերը: Կանոնակարգային փոփոխությունների համաձայն՝ մրցումները
անցկացվեցին 1 մրցափուլով՝ մինչև 14 տարեկան աշակերտների շրջանում: Մարզային փուլի
մրցապայքարում հաղթող ճանաչվեց Գավառի Ս.Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոցի
թիմը(Գայրանյան Տիգրան, Մարգարյան Վարդան, Գայրանյան Արեգնազ,Դավոյան Իշխան):

Կազմակերպվել են ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության, շարադրությունների մրցույթներ, նկարչական
ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին
նվիրված հանդիսություններ, ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվող
միջոցառումներ, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության
ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության
արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:

տոներին, ինչպես նաև հիշատակի՝ Հայոց Մեծ եղեռնի և 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի օրերին:

Կազմակերպվել և անցկացվել են Մայրենի լեզվի օրվան, Հայոց բանակի ստեղծման տարելիցին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 71-ամյակին, ՀՀ Սահմանադրության օրվան,

ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված տարաբնույթ միջոցառումներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում 2016 թվականին „Մեր մեծերը,, խորագրով միջոցառումների շրջանակներում անցկացվեցին մասսայական միջոցառումներ՝ նվիրված մեծանուն հայորդիներ Վահե Հայկին, Գրիգոր Խանջյանին, Գրիգոր Զոհրապին, Սրբուհի Տյուսապին, Ավետիս Ահարոնյանին:

Վերոնշյալ միջոցառումները մեծ շուքով անցկացվել են հետևյալ դպրոցներում՝ Վահե Հայկ/120-ամյակ, Գավառի N 2 միջնակարգ դպրոց/, Գրիգոր Խանջյան/90-ամյակ, Վահանի միջնակարգ դպրոց/, Գրիգոր Զոհրապ /155-ամյակ, Վարսերի միջնակարգ դպրոց/, Սրբուհի Տյուսապ/175-ամյակ, Մարտունու N 1 հիմնական դպրոց/, Ավետիս Ահարոնյան/Վարսերի միջնակարգ դպրոց/:

2015-2016 ուսումնական տարում հանրակրթական դպրոցների աշակերտները մասնակցել են ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող հանրապետական ասմունքի մանկապատանեկան 8-րդ մրցույթ-փառատոնին: Հանրապետական փուլում հաղթող ճանաչվեց և հատուկ մրցանակի արժանացավ Մարտունու N 1 հիմնական դպրոցի աշակերտուհի Աննա Ավետիսյանը, իսկ Սևանի N 6 միջնակարգ դպրոցի աշակերտ Անդրանիկ Աբրահամյանը և Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մարիամ Ումրշատյանը արժանացան խրախուսական մրցանակի:

Հայ անվանի բանաստեղծներ Վահագն Դավթյանին և Գևորգ Էմինին նվիրված հանրապետական ասմունքի մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոնի մարզային փուլին ակտիվություն ցուցաբերեցին և հաղթող ճանաչվեցին Մարտունու ավագ և N 1, N 2 հիմնական, Մարուխանի N 2, Գեղհովիտի N 2, Կարմիրգյուղի N 1 և Լճաշենի միջնակարգ դպրոցները:

2015 թվականին „Սասնա ծռեր ,, էպոսասացության փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Վահանի, Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ և Մարտունու N 1 հիմնական դպրոցների աշակերտները, հանրապետական փուլում 1-ին տեղ է գրավել Մարտունու N 1 հիմնական դպրոցի աշակերտուհի Նառա Ավետիսյանը, իսկ Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ դպրոցների աշակերտներ Նորիկ Նազարյանը, Վահագն Արևշատյանը, Անժելա Հունանյանը, Մերի Խաչատրյանը արժանացել են խրախուսական մրցանակի:

2016 թվականին „Սասնա ծռեր ,, էպոսասացության փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Լանջաղբյուրի, Հայրավանքի, Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ և Մարտունու N 1 հիմնական դպրոցները: Վերոնշյալ փառատոնի հանրապետական փուլն այս տարի անցկացվեց մեր մարզում, որին մեր մարզի աշակերտների հետ միասին մասնակցում էր ԼՂՀ –ի և Շիրակի, Կոտայքի, Արագծոտնի, Արարատի մարզերի մրցույթ-փառատոնի մարզային փուլի հաղթող 25 աշակերտ: Մեր մարզից հանրապետական փուլում հաթող ճանաչվեցին և առաջին ու երրորդ տեղերը զբաղեցրին Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ, Մարտունու N 1 հիմնական դպրոցի աշակերտներ Նարեկ Սիմոնյանը, Լուսինե Մարդոյանը և Սամվել Ավետիսյանը:

2015 թվականին „Բարբառների երկխոսություն,, փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Կարմիրգյուղի N 1, Վահանի միջնակարգ և Մարտունու N 1 հիմնական դպրոցները, հանրապետական փառատոնին մասնակցել և 1-ին տեղն են զբաղեցրել Կարմիրգյուղի N 1 հիմնական դպրոցի աշակերտ Միքայել Գափոյանը, Մարտունու N 1 հիմնական դպրոցի աշակերտ Արսեն Մադաթյանը, իսկ Կարմիրգյուղի N 1 հիմնական դպրոցի աշակերտուհիներ Արմինե Սուլյանն ու Լիանա Մկրտչյանը արժանացել են խրախուսական մրցանակի:

<<Ժիվայա կլասիկա>>, Գավառի երկրագիտական թանգարանում անցկացված „Զատիկ,, , „Եվրոպական ժառանգության օրեր,, , „Թանգարանային գիշեր,, միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Կարմիրգյուղի N 1 և N 2, Հայրավանքի միջնակարգ, Գավառի ավագ, N 1, N 4 հիմնական դպրոցների աշակերտները, մանկատան սաները:

Գավառի քաղաքային գրադարանում անցկացված միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գավառի N 7 միջնակարգ, Գավառի ավագ, N 1,2,3, և 4 հիմնական դպրոցի աշակերտները, իսկ „Ինչ գիտենք մենք,, խաղ-մրցույթին լավագույն ձևով մասնակցեցին Գավառի N 1, N 5 հիմնական դպրոցների աշակերտական խմբերը, հաղթող ճանաչվեց N 5 հիմնական դպրոցի խումբը:

Հուլիս ամսին Վրաստանի Հանրապետությունում անցկացվեց պարի միջազգային մեծ փառատոն , որին մասնակցեցին նաև մեր մարզի պարային խմբերը: Սևան քաղաքի „Արծրուն Ղարիբյան,, պարային ստուդիայի խումբը, բաղկացած Սևանի N 7 հիմնական և Լճաշենի, Ծովազարդի միջնական դպրոցների աշակերտներից, 37 պարային խմբերի մեջ հաղթող ճանաչվեց և արժանացավ „Գրան-պրի,, մրցանակի: Իսկ Գանձակի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտներից կազմված խումբը /Գանձակի երաժշտական դպրոց/ 30 պարային խմբերի մեջ հաղթող ճանաչվեց և արժանացավ 2-րդ պատվավոր մրցանակի:

<<Ընթերցման օլիմպիադային>> ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Երանոսի N2, Կարմիրգյուղի N 1, Կարմիրգյուղի N 2 , Գանձակի N 1, Գանձակի N2, Նորատուսի N 1, Մարուխանի N 1, Զուլաքարի N 1, Ն.Գետաշենի N 2, Լճաշենի, Ծովազարդի, Փամբակ-Դարանակի միջնակարգ և Գավառի N 3, Գավառի N 4, Գավառի N 5, Սևանի N 2, Սևանի N 3, Վարդենիսի N 2 և Մարտունու N 1 հիմնական դպրոցները:

Կազմակերպվել են բոնցքամարտի, ձեռքի գնդակի, վոլեյբոլի, Ֆուտբոլի և այլ մարզաձևերից մարզային առաջնություններ, իսկ հաղթողներից շատերը հաջողությամբ են հանդես եկել նաև մրցումների հանրապետական փուլերում: ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված ՀՀ դպրոցականների 25-րդ մարզական խաղերի եզրափակիչ փուլում Գավառի N 2 և Գեղարքունիքի միջնակարգ դպրոցների վոլեյբոլի հավաքական թիմը գրավեց 3-րդ տեղը, իսկ Գավառի N 5 հիմնական դպրոցի ֆուտբոլի և Սևանի ավագ դպրոցի բասկետբոլի թիմերը միջմարզային փուլում գրավեցին 1-ին տեղը:

ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում մարզի հավաքական թիմը, որում ընդգրկված էին Մարտունու N1 հիմնական դպրոցի, Գավառի N 5 հիմնական դպրոցի և Գավառի N2 միջնակարգ դպրոցի 4-6-րդ դասարանների աշակերտները, արժանացան 3-րդ մրցանակի և գավաթի:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացված սպորտլանդիայի ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլը կանցկացվի հոկտեմբեր ամսին:

2015-2016 ուստարում անցկացվել են ՀՀ դպրոցականների առաջին ուսումնամարզական խաղերը: Մարզային փուլում հաղթող Վարդենիկի N1 հիմնական դպրոցի թիմը հանրապետական փուլում գրավեց 4-րդ տեղը:

Մարզական տարբեր մրցումներին ու միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունեցել Գավառի N2, N8, Սարուխանի N1, Գեղարքունիքի, Սևանի N6, Վահանի, Լճաշենի, Կարճաղբյուրի, Լուսակունքի, Գեղիվտի N2, Զուլաքարի N 1 միջնակարգ և Սևանի N1, Գավառի N1 և N5, Մարտունու N1, N2, Վարդենիկի N1, Վարդենիսի N4 հիմնական դպրոցների հավաքական թիմերը:

Մարզի դպրոցները ակտիվորեն մասնակցել են նաև «Հայաստան համահայկական հիմնադրամի» կողմից կազմակերպվող հեռուստամրաթոնին և համապատասխան հաշվեհամարին մուծել ավելի քան 2160.0 հազար դրամ իսկ ապրիլյան պատերազմից հետո Արցախին օգնելու նպատակով հանգանակել են 18890.0 հազար դրամ:

Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի իրականացման շրջանակներում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ուսման և դաստիարակության աշխատանքների կազմակերպման համատեքստում հետևողականորեն իրականացվել են անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղված բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ՝ ապահովելով համագործակցություն մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, ուսումնական հաստատությունների տնօրենների ու մանկավարժների, ծնողների, իրավապահ մարմինների, երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնի աշխատանքներում:

Մարզում 11 անչափահասների կողմից կատարված իրավախախտումների վերացման նպատակով հանրակրթական հաստատություններում, ըստ միջոցառումների ծրագրի, դասղեկի ժամերի, դասարանական և ծնողական ժողովների, աշակերտական ինքնակառավարման մարմինների միջոցառումների, թեմատիկ ցերեկույթների, հանդիսությունների միջոցով քննարկվել են հասարակության համար վտանգավոր, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող երևույթների անընդունելիությունը և այն դրականը, որն ապահովում է հասարակության առաջընթացը:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ամառային հանգստի կազմակերպման ուղղությամբ: Մարզի ավելի քան 950 աշակերտ ընդգրկվել է հանրապետության ամառային /այդ թվում՝ ԵԿՄ/ ճամբարներում:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման ուղղությամբ: Ապահովվել է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ռազմամասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպմանը: Մարզի 9 դպրոցների/Գեղամասարի, Փոքր Մասրիկի,

Արեգունու, Ջուլաքարի N 1, N2, Երանոսի N 2, Վերին Գետաշենի N 2, Գանձակի N 1 միջնակարգ և Գավառի N 5 հիմնական/ ՆՁՊ կաբինետները վերանորոգվել և կոչվել են 2016 թվականի ապրիլյան պատերազմի, ինչպես նաև ԼՂՀ-ում մարտական հերթապահության ժամանակ զոհված զինծառայողների անունով:

Կազմակերպվել են <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթի ներդպրոցական և տարածքային և <<Կորյուն>> ռազմամարզական խաղերի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը: <<Կորյուն>> ռազմամարզական խաղերի մարզային փուլում հաղթող ճանաչվեց Ջուլաքար գյուղի Ավարդ Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցի թիմը:

Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի ներդպրոցական փուլի մրցումները տեղի կունենա սեպտեմբեր ամսին:

Իրականացվել է ՆՁՊ կաբինետների, զենքի և զինամթերքի նպատակային օգտագործման և պահպանության մշտադիտարկում: Ներկայումս 107 դպրոց ունի ուսումնական զենք, իսկ մոտակա տարիներին սահմանված պահանջներին համապատասխան ուսումնական զենք և զինամթերք ստանալու հնարավորություն չունի մարզի 8 դպրոց (Ջաղացաձորի, Կուտականի, Ծափաթաղի միջնակարգ, Սեմյոնովկայի, Լեռնահովիտի, Գեղաքարի, Գեղամաբակի, Ավազանի հիմնական դպրոցները): Նոր ուսումնական տարում ևս աշխատանք է տարվելու ՆՁՊ առարկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, դպրոց-բանակ կապը ամրապնդելու և ռազմահայրենասիրական միջոցառումները պարբերաբար կազմակերպելու ուղղությամբ:

2010թվականից ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության մասնակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 113 դպրոցում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որտեղ ընդգրկված է մարզային ենթակայության 111 և ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության 2 դպրոց (Ծաղկունքի բաց դպրոց և Վարդենիկի կրթահամալիր):

Ծրագրում ընդգրկված է շուրջ 12000 երեխա, այդ թվում՝ 1500-ը նախակրթարանների սան:

Չեն ընդգրկվել ավագ դպրոցները և Գավառի N7 մ/դ, Սարուխանի N2 մ/դ, Սևանի N2, Գեղամաբակի, Գեղաքարի և Ավազանի հիմնական դպրոցները:

Անհրաժեշտ աշխատանք է կատարվել մարզում նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ու ծրագրերի մշակման ուղղությամբ՝ կարևորելով 5-6 տարեկան երեխաների՝ դպրոցին նախապատրաստելու հարցը՝ որպես հանրակրթության որակի ապահովման գործոններից մեկը: Մարզում գործում է 46 նախադպրոցական հաստատություն, որի 118 խմբում հաճախում է 3493 երեխա:

2016 թվականին մարզում նախադպրոցական կրթություն իրականացվում է 30 համայնքներում (46 մանկապարտեզ):

2011-2015 թվականների ընթացքում իրականացված ծրագրերի շնորհիվ, ներկայումս, մարզի 44 համայնքներում գործում է նաև 51 նախակրթարան, որից 37-ը դպրոցներում(1070 երեխա), 14-ը՝ մանկապարտեզներում(555 երեխա) :

2015-2016 ուստարում մարզի 8 համայնքում բացվել է 11 նախակրթարան՝ 8-ը/ Ծովազարդի, Սարուխանի N1, Ծովասարի, Փամբակ-Դարանակի, Արծվանիստի միջնակարգ, Ճամբարակի N2 և

Ձորագյուղի հիմնական դպրոցներում և Մարտունու N1 մանկապարտեզում/ «Կրթության բարելավում» և 3-ը (Այգուտի, Դրախտիկի և Դպրաբակի միջնակարգ դպրոցներում)՝ «Փրկենք երեխաներին» կազմակերպության ծրագրով:

Կատարվել են վարչության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, ներկայացվել է մարզպետի՝ 285 որոշումների և 32 կարգադրությունների նախագիծ, պատասխանվել է քաղաքացիների դիմում-բողոքների և տարբեր կազմակերպություններից ստացված 488 գրությունների:

Վարչությունն իր աշխատանքները կազմակերպել է՝ համագործակցելով մարզպետարանի ու ՀՀ ԿԳՆ կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, հումանիտար և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների հետ:

Թեև մշտապես եղել է հետևողականություն աշխատանքների կազմակերպման և առաջընթացի գրանցման ուղղությամբ, այնուամենայնիվ, կան որոշակի խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես՝

- լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը (ապահովված են միայն 11 դպրոցներ).
- ջեռուցման լոկալ համակարգով ապահովումը (ապահովված է միայն 63 դպրոց).
- համակարգչային ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով, աշակերտական սեղան-նստարաններով և ուսուցչական-աթոռներով, սպորտային գույքով համալրումը.
- հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում ուսուցչի թափուր տեղերը զբաղեցնելու համար մասնագետների պահանջի բավարարումը (20 դպրոցում՝ 26 ուսուցչի թափուր տեղ).
- վթարային վիճակում գտնվող 3 (Գեղիովիտի N2, Վ.Գետաշենի N2 միջնակարգ և Լիճքի հիմնական) դպրոցական շենքերի հիմնանորոգումը և առհասարակ դպրոցական շենքերի վերանորոգումը.
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման անհրաժեշտությունը.
- խորհուրդների անդամների համար վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը: